

յօժարութեամբ այն ամէն բանի մէջ, զոր Տե-
րամբ կարող պիտի ըլլանք, պիտի սատարենք
քեզ, որպէս զի քու պաշտօնդ աւելի դիւրու-
թեամբ կարող ըլլաս կատարել ըստ Առաքելոյն
պատուիրանի: Որով՝ ինչպէս Մեղմէ խնդրած
էիր, մեծաւ փութով յանձնարարեցինք զքեզ
մեր նամակով՝ մեր ի ֆրիստոս ամենասիրելի
որդւոյն Լուդովիկոսի Գաղղիացւոց ամենաքրիս-
տոնեայ թագաւորին դեսպանին, նոյնպէս մեր
նամակով հրամայեցինք մեր սիրելի որդւոյն՝
Առաքելական փոխանորդին, որպէս զի սիրով եւ
փոյթեռանդն օգնէ քեզի: Այն նամակները
ներկայիս հետ մէկտեղ կը զըկենք քեզի, որպէս
զի զանոնք անոնցմէ իւրաքանչիւրին յանձնես
ինչպէս որ կ'ուզես: Իսկ ինչ որ կը գրես թէ
հոգ տարած ես զըկելու առ յարգելի եղբայրն
մեր Մելքիսեդեկ՝ Մեծաց Հայոց Կաթողիկոսը,
մեր նամակն զոր մեր ձեռքէն առած էիր, եւ
ասոր համար ձեր ազգէն երկու եպիսկոպոս
ճամբայ դրած ես մեր ընծաներովը, այս ամէնը
կարի հաճելի եղաւ մեզ. որովհետեւ մեծ փա-
փաքով կամ եւս աւելի մեծ սրտմաշութեամբ պա-
տասխանի կը սպասենք ուղղութեան մասին այն
երկու մոլորութեանց որոնց համար ըսիր մեզ որ
դեռ կան ձեր եկեղեցւոյն մէջ, այսինքն թէ քա-
հանայագործութեան մէջ Ս. Սկիհին մէջ գին-
ւոյ հետ ջուր չէք խառներ. եւ թէ Երեքսրբեան
Փառատուութեան մէջ որ խաչեցար բառերը կը
յաւելուք, որոնք Կաթողիկէ Ս. Եկեղեցիէն Սի-
նոդական վճռով դատապարտուած են. որով-